

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. հունվարի 26
գ. Վարդենիկ

N1

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի 2011թ-ի բյուջեի կատարման հաշվետվության մասին:

Վարդենիկ համայնքի ղեկավար Հ. Հովեյանի տարեկան հաշվետվությանը մասնակցում էին՝ ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ Ա. Ղուկասյանը, Վարդենիկ համայնքի ավագանին, գյուղապետարանի աշխատակազմը և Վարդենիկ համայնքի բնակիչներ:

Համայնքի 2011թ-ի և 2012թ-ի բյուջեն մշակվել է հիմք ընդունելով համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը: Ընդունված որոշումների պատշաճ իրագործմամբ հաջողվել է համայնքում ապահովել զգալի տեղաշարժ:

Համայնքի 2011թ բյուջեն համայնքի ավագանու քննարկման ու հաստատման է ներկայացվել 2011թ-ի փետրվարի 17-ին:

Եկամտային մասը պլանավորվել է 139040.0 հազ. դրամ, ծախսային մասը նախատեսվել է 139040.0 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը՝ 91419.2 հազ. դրամ:

Սեփական եկամուտները պլանավորվել է 23310.3 հազ. դրամ՝ փաստացի հավաքագրվել է 27485.0, այդ թվում՝

1. Հողի հարկ . պլանավորվել է 14370.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 14979.1 հազ. դրամ, որը կազմել է 104.2 %:
2. Գույքահարկը պլանավորվել է 6352.3 հազ. դրամ՝ փաստացի հավաքագրվել է 9722.8 հազ. դրամ՝ կատարողականը 153.0 %:
3. Տեղական տուրքերը պլանավորվել է 618.0 հազ. դրամ՝ հավաքագրվել է 892.9 հազ. դրամ՝ կատարողականը 144.4 %:
4. Վարձակալությամբ տրամադրված հողերի վարձավճարները պլանավորվել է 1720.0 հազ. դրամ, հավաքագրվել է 1630.0 հազ. դրամ, որը կազմել է 94.7 %:
5. Այլ եկամուտներ՝ 250.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 260.2 հազ. դրամ:

Հողի օտարումից մուտքերը կազմել է 23149.1 հազ. դրամ:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան կազմել է 113329.7 հազ. դրամ, իսկ պետության կողմից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիա) 1881.2 հազ. դրամ:

2011թ-ի բյուջեի եկամուտների կատարողականը կազմել է 102.1 %:

2011թ-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգմամբ:

1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, որտեղ ներառված են համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների աշխատավարձերը, սոցիալական ապահովության վճարները, պարգևատրումները, էլ. էներգիայի, գազի, կապի վճարները, համակարգչային, տեղեկատվական և այլ ծառայությունների, կենցաղային նյութերի և գրասենյակային ապրանքների, սարքավորումների, տրանսպորտային նյութերի ձեռք բերումը, նորոգումը, և այլ պարտադիր վճարներ, որի համար ծախսվել է 29723.7 հազ. դրամ:

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, որտեղ ներառված են համայնքի գլխավոր հատակագծի կազմումը, համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պետ. գրանցումը և այլ ծառայություններ, որի համար ծախսվել է 11192.8 հազ. դրամ:

3. Անասնաբուժական ծառայություններ 1200.0 հազ. դրամ,

4. Ոռոգում	15168.4 հազ. դրամ,
5. Ճանապարհային տրանսպորտ	44079.1 հազ. դրամ,
6. Աղբահանման աշխատանքներ	1098.0 հազ. դրամ,
7. Աձեցվող ակտիվներ	960.0 հազ. դրամ,
8. Ջրամատակարարման համակարգերի կառուցման ծախսեր	3440.0 հազ. դրամ,
9. Փողոցների լուսավորության պահպանման ծախսեր	4126.2 հազ. դրամ:
10. Այլ մշակութային միջոցառումներ	1682.1 հազ. դրամ,
11. Երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր	14434.1 հազ. դրամ,
12. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ծախսեր	22123.0 հազ. դրամ,
13. Սոցիալական պաշտպանություն (դրամական օգնություններ)	2580.7 հազ. դրամ:

- 2011թ-ի ընթացքում ավարտվել է Վարդենիկ համայնքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները:
- Մարտունու միջհամայնքային միավորմանը փոխանցվել է անդամավճար 550.0 հազ. դրամ, իսկ ՀՀ համայնքների միությանը՝ 97.0 հազ. դրամ:
- Բնակավայրի նշանակության հողամասերի սեփականության իրավունքի վկայականների ձեռք բերման համար, ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին է փոխանցվել 3527.8 հազ. դրամ: Առայժմ օտարվել է շուրջ 85 հողակտոր և համայնքի բյուջե է մուտքագրվել 23149.1 հազ. դրամ
- Վարդենիկ համայնքի սեփականություն հանդիսացող պոմպակայանից մղվող ջուրը համայնքի ջրագծի ներքին ցանցին միացնելու համար կառուցվել է 600 գծմ նոր ջրագիծ, որի համար ծախսվել է 3300.0 հազ. դրամ:
- Փողոցների լուսավորման ցանցի էլ. էներգիայի վճարը կազմել է 4126.2 հազ. դրամ:
- Մանկապարտեզ ստեղծելու նպատակով՝ անհատույց օգտագործման իրավունքով համայնքին է տրամադրվել Վարդենիկի «Առողջության կենտրոն» ՊԲԸ-ին պատկանող շենքի մի հատվածը, որտեղ կատարվել է 22123.0 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:
- Համայնքում կատարվել է 960.0 հազ. դրամի բազմամյա տնկարկների ձեռք բերում և հիմնում:
- Կատարվել է շուրջ 4100 քմ ճանապարհների ասֆալտապատում, որի համար ծախսվել է 29000.0 հազ. դրամ:
- Կառուցվել է համայնքի մուտքը ձևավորող վահանակ, որի համար ծախսվել է 4160.1 հազ. դրամ:
- Ձեռք է բերվել ավտոգրեյդեր, որի գինը կազմել է 7485.0 հազ. դրամ:
- Փողոցների ջրահեռացման առուններում կատարվել է 1350գծմ կիսախողովակների տեղադրման աշխատանքներ, որի համար ծախսվել է 14740.4 հազ. դրամ:

2011թ-ի ընթացքում օգնության խնդրանքով դիմած սոց. անապահով 92 քաղաքացիներից 76 ընտանիքի տրամադրվել է ընդ. 2280.0 հազ. դրամի ֆինանսական օգնություն, իսկ Վարդենիկի Կրթահամալիրի, թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցների սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին որպես դասագրքերի վարձավճար՝ տրամադրվել է 300.7 հազ. դրամ:

2011թ-ի տարեվերջի ազատ մնացորդը կազմել է 106656.4 հազ. ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի
ղեկավար Արմեն Հովհաննիսյանի հաշվետվությունը

Նշվեց, որ 2011թ-ի ընթացքում տեղի է ունեցել ավագանու թվով 6 նիստեր՝ կայացվել է 21 որոշմներ: Սահմանվել է 2011 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել 2011 թվականի բյուջեի կատարողականը, քննարկվել և հաստատվել է համայնքի 2012 թվականի բյուջեի նախագիծը:

Վարդենիկ համայնքի ղեկավարի մոտ ընդունելության համար դիմել են 1775, իսկ ավագանուն՝ 138 քաղաքացիներ:

Օգնության նպատակով դիմած 96 քաղաքացիների դիմումները քննարկվել են համայնքի ավագանու նիստերում, որոնցից բավարարվել է ընդամենը 92 քաղաքացու դիմում: Դրամական օգնության ընդհանուր գումարը կազմել է 2580.7 հազ. ՀՀ դրամ:

Համայնքի տարածքում շին. թույլտվության համար դիմել են 11 քաղաքացի և ստացել համապատասխան թույլտվություն:

Ծխաբաժանման համար դիմել են 12 քաղաքացիներ, որոնցից 11-ի ծուխը առանձնացվել է:

Երկքաղաքացիություն ստանալու համար դիմել են վեց քաղաքացիներ:

Տարբեր իրավախախտումների համար վաչական պատասխանատվության են ենթարկվել 4 քաղաքացիներ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ
Մանվել Մելքոնյանի հաշվետվությունը

Վարդենիկ համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը կազմում են 1852.88 հա, որից՝

1. ՀՀ քաղաքացիներին պատկանող՝ 1491.3հա
2. Վարդենիկի համայնքի սեփականություն հանդիսացող վարելահողեր 361.58 2011թ-ին Վարդենիկի ցանքատարածքները կազմել են 1492.0հա, որից՝
 1. կարտոֆիլ 400.0հա,
 2. բանջարեղեն 250.0հա,
 3. աշնանացան ցորեն 565.0հա,
 4. գարնանացան ցորեն և գարի 252.0հա,
 5. հատիկաընդեղեն /ոլոռ,լոբի և այլ մշակաբույսեր/ 25.0հա:2011թ-ին կատարվել է 450.0հա աշնանացան:

Վարդենիկի համայնքային սեփականություն հանդիսացող 361.58հա վարելահողերից 30.0հա վարելահող ՀՀ կառավարության 25.08.2005թ-ի N1275 որոշմամբ, անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տրվել է «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, իսկ 234.0 հա վարելահողեր վարձակալվել են համայնքի բնակիչները, որի տարրեկան վարձավճար կազմում է 1560.0 հազար ՀՀ դրամ: 2011 թ.-ին հողի վարձավճարը գանձվել է 1517.0 հազար դրամ, որը կազմում է 97%:

2011թ գարնանը համայնք է ներկրվել 16.5 տոննա ցորենի էլիտար սերմացու և բաժանվել Վարդենիկի հողօգտագործողներին, իսկ 2012թ.-ի գարնանային աշխատանքների համար նախատեսված է ներկրել 3000 պարկ ազոտական պարարտանյութ և կբաժանվի 309 հողօգտագործողների:

2011թ.-ին Վարդենիկ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 98322քմ տարածք, աճուրդ վաճառքով, բնակելի կառուցապատման նպատակով օտարվել է 83 ՀՀ քաղաքացիների:

Ավարտելով հաշվետվությունը համայնքի ղեկավարը Հ.Հովեյանը իր խոսքով դիմեց համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2012թ-ի բյուջեի միջոցների գոյացմանը:

Վարդենիկ համայնքի ղեկավար՝ Հովհաննես Հովեյան

Աշխատակազմի ղեկավար՝ Արմեն Հովհաննիսյան